

Կազմված է 03.02.2017թ.

Բաղկացած է 11 էջերից  
Տպագրված է 2 օրինակ  
Օրինակ —

**ՀԱՍՏԱՏՎԱԾ Է**

Հայաստանի Հանրապետության  
կենտրոնական բանկի խորհրդի՝

2017 թվականի փետրվարի 3-ի թիվ

27 Ա որոշմամբ

**ԳՐԱՆՑՎԱԾ Է**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ  
ՌԵԳԻՍՏՐԻ ԿՈՂՄԻՑ 16.01.2017 թ.

գրանցման թիվ 222.160.941725

վկայական 03Ա1091725

հարկ վճարողի հաշվառման համար  
02656976

16.01.2017թ. գրանցված կանոնադրության թիվ  
\_\_\_ փոփոխությունը գրանցված է  
իրավաբանական անձանց պետական ռեգիստրի  
կողմից \_\_\_ 20\_\_թ.

Պետական ռեգիստրի գործակալության պետ՝  
Գարուշ Դավթյան

**ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿՅԱՆՔԻՆ ԿԱՄ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ  
ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՄՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ**

**ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

(նոր խմբագրությամբ)

Երևան 2017

## 1. Ընդհանուր դրույթներ

1. **ԶԻՆՏԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿՅԱՆՔԻՆ ԿԱՍ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՄՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԸ** (այսուհետ՝ **Հիմնադրամ**)՝ շահույթ ստանալու նպատակ չհետապնդող՝ պետական գործառույթներով օժտված իրավաբանական անձ է, որը «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (**այսուհետ՝ Օրենք**) սահմանված կարգով իրականացնում է զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցումն է:

2. Հիմնադրամի հիմնադիրը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկն է (**այսուհետ նաև՝ Կենտրոնական բանկ կամ Հիմնադիր**): Հիմնադրի գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան 0010, Վազգեն Սարգսյան 6 (էլեկտրոնային հասցեն՝ [info@cba.am](mailto:info@cba.am)):

3. Հիմնադրամը ստեղծվել է Օրենքի համաձայն՝ Կենտրոնական բանկի խորհրդի 2017 թվականի հունվարի 13-ի թիվ 6 Ա որոշմամբ:

4. Հիմնադրամի գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, 0010, Վազգեն Սարգսյան 6:

5. Հիմնադրամի անվանումն է՝

- 1) Հայերեն լրիվ անվանումն է՝ **ԶԻՆՏԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿՅԱՆՔԻՆ ԿԱՍ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՄՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ**
- 2) Հայերեն կրճատ անվանումն է՝ **«ԶԻՆՏԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ**
- 3) ռուսերեն լրիվ անվանումն է՝ **ФОНД ВОЗМЕЩЕНИЯ УЩЕРБА НАНЕСЕННОГО ЖИЗНИ ИЛИ ЗДОРОВЬЮ ВОЕННОСЛУЖАЩИХ**
- 4) ռուսերեն կրճատ անվանումն է՝ **ФОНД “СТРАХОВАНИЯ ВОЕННОСЛУЖАЩИХ”**
- 5) անգլերեն լրիվ անվանումն է՝ **SERVICEMEN’S LIFE OR HEALTH LOSS COMPENSATION FOUNDATION**
- 6) անգլերեն կրճատ անվանումն է՝ **“INSURANCE FOUNDATION FOR SERVICEMEN”**.

6. Հիմնադրամն ունի խորհրդանիշ, որի պատկերն ու նկարագրությունը սահմանված են սույն կանոնադրության Հավելվածում:

7. Հիմնադրամի գործունեության ժամկետը չի սահմանափակվում:

## 2. Հիմնադրամի գործունեության նպատակը և շահառուները

8. Հիմնադրամի գործունեության նպատակը Հայաստանի Հանրապետության պաշտպանության, մարտական գործողություններին մասնակցելու կամ հակառակորդի հետ շփման գծում մարտական հերթապահության, կամ հատուկ առաջադրանք կատարելու ժամանակ (**այսուհետ՝ մարտական գործողություններ** զինձառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցումը և այդ նպատակի ապահովման համար Օրենքով սահմանված գործառնությունների իրականացումն է:

9. Հիմնադրամի նպատակներից ելնելով՝ Օրենքով սահմանված պայմանները բավարարելու դեպքում, Հիմնադրամի հնարավոր շահառու կառող են հանդիսանալ՝

1) զինձառայողը, ում կյանքին կամ առողջությանը վնաս է պատճառվել մարտական գործողությունների հետևանքով.

2) զինձառայողի ամուսինը, զավակը (զավակները), ծնողը (ծնողները).

3) հատուցման դեպքը տեղի ունենալու օրվա դրությամբ 18 տարին չլրացած կամ անգործունակ ճանաչված, կամ մինչև 23 տարեկան առկա ցերեկային ուսուցմամբ սովորող ուսանող քույրը եւ եղբայրը, ինչպես նաև զինձառայողի խնամքի տակ գտնված 18 տարեկան եւ դրանից բարձր տարիքի հաշմանդամ քույրը և եղբայրը, եթե հաշմանդամ են ճանաչվել մինչև իրենց 18 տարին լրանալը: Ընդ որում, քույրը և եղբայրը համարվում են շահառու, եթե նրանց ծնողները կամ միակ ծնողը մահացած են կամ ունեն աշխատանքային գործունեությամբ զբաղվելու կարողության առնվազն 3-րդ աստիճանի սահմանափակում:

4) այլ անձ, ով՝

ա. հատուցման դեպքը տեղի ունենալու օրվա դրությամբ այդ անձը գտնվել է զինձառայողի խնամքի տակ և ունեցել է հաշմանդամություն կամ աշխատանքային կենսաթոշակի իրավունք.

բ. խնամել է զինձառայողին մինչև նրա 18 տարին լրանալը:

### **3. Հիմնադրամի իրավունակությունը, գործառույթները, իրավունքները և պարտականությունները**

10. Հիմնադրամի իրավունակությունը ծագում է նրա պետական գրանցման պահից և դադարում է լուծարման պահից:

11. Հիմնադրամը ձեռք է բերում իրավաբանական անձի կարգավիճակ իր պետական գրանցման պահից:

12. Հիմնադրամն իրավասու է իրականացնելու միայն Օրենքով նախատեսված գործառույթներ:

13. Հիմնադրամը կարող է լուծարվել, վերակազմակերպվել կամ սնանկ ճանաչվել միայն Հիմնադրամի լուծարման, վերակազմակերպման կամ սնանկ ճանաչելու մասին օրենք ընդունելու դեպքում:

14. Հիմնադրամը Հայաստանի Հանրապետության օրենսդրության շրջանակներում և սույն Կանոնադրության հիման վրա կարող է անձամբ կամ այդ նպատակով ստեղծված տնտեսական

ընկերությունների միջոցով ձեռնարկատիրական գործունեություն իրականացնել, եթե դա ծառայում է Հիմնադրամի նպատակների իրականացմանը և համապատասխանում է այդ նպատակներին: Հիմնադրամը կարող է անձամբ իրականացնել ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները՝

ա. Հայաստանի Հանրապետությունում կամ արտերկրում թողարկել պարտատոմսեր և այլ արժեթղթեր՝ արտահայտված Հայաստանի Հանրապետության դրամով և (կամ) արտարժույթով.

բ. Օրենքով սահմանված նպատակներով ու կարգով իր ակտիվների կառավարման և (կամ) տնօրինման համար անհրաժեշտ գործունեության իրականացումը.

գ. Դրոշմանիշերի թողարկումն ու իրացումը.

դ. Օրենքի պահանջներին համապատասխանող ակտիվներում ներդրումների կատարումը.

Օրենքով սահմանված նպատակների իրականացման համար անհրաժեշտ այլ գործունեության իրականացումը:

15. Հիմնադրամն իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) օրենսդրությամբ չարգելված եղանակներով և Օրենքով սահմանված նպատակով տիրապետում, օգտագործում և տնօրինում է հիմնադրամի ակտիվները.

2) հատուցման դեպք տեղի ունենալու պարագայում՝ ապահովում է հատուցման գումարների վճարումը շահառուներին.

3) կազմակերպում է հանգանակություններ՝ կամավոր նվիրաբերությունները քաջալերելու նպատակով.

4) իրականացնում է Օրենքով սահմանված այլ գործառույթներ:

16. Իր գործառույթներն իրականացնելու նպատակով հիմնադրամն իրավասու է՝

1) կնքել իր գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գործարքներ.

2) ստանալ վարկեր, փոխառություններ, երաշխիքներ.

3) իր միջոցները ներդնել Օրենքում նշված ակտիվներում.

4) Հայաստանի Հանրապետությունում կամ արտերկրում թողարկել պարտատոմսեր և այլ արժեթղթեր՝ արտահայտված Հայաստանի Հանրապետության դրամով և (կամ) արտարժույթով.

5) Կենտրոնական բանկում և Հայաստանի Հանրապետության տարածքում գործող այլ բանկերում ունենալ բանկային և այլ հաշիվներ.

6) կատարել իր գործառույթների հետ կապված և դրանց իրականացմանն ուղղված՝ փաստացի և իրավական այլ գործողություններ:

17. Հիմնադրամը պարտավոր է՝

1) գործել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, օրենքներին և այլ իրավական ակտերին, ինչպես նաև սույն կանոնադրությանը համապատասխան.

2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վարել գործավարություն և հաշվապահական հաշվառում.

3) Օրենքով նախատեսված դեպքերում և կարգով տեղեկատվություն ու հաշվետվություններ ներկայացնել պետական մարմիններին.

#### **4. Հիմնադրամի սկզբնական միջոցների այլ գույքի ձևավորման աղբյուրները . Հիմնադրամի գույքի կառավարման և տնօրինման կարգը**

18. Հիմնադրամի միջոցները ձևավորվում են հիմնադրամի սկզբնական միջոցներից եւ հիմնադրամի՝ Օրենքով չարգելված աղբյուրներից ստացված այլ գույքից և միջոցներից:

19. Հիմնադրամի սկզբնական միջոցները ձևավորվում են հիմնադրաման պահին հիմնադրի կողմից հիմնադրամին հատկացված գույքից, որի չափը կազմում է 10 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամ:

20. Հիմնադրամի այլ գույքը և միջոցները կարող են ձևավորվել՝

1) Օրենքով սահմանված կարգով հավաքագրված դրոշմանիշային վճարների գումարներից.

2) ներգրավված վարկերից, փոխառություններից.

3) նվիրատվությունների, նվիրաբերությունների, դրամաշնորհների գումարներից.

4) միջոցների ներդրումներից ստացվող եկամուտներից.

5) հիմնադրամի կողմից թողարկված պարտքային արժեթղթերի տեղաբաշխումից ստացված գումարներից

6) օրենքով չարգելված այլ աղբյուրներից:

21. Հիմնադրամի գույքը և միջոցները կարող են օգտագործվել միայն՝

1) հատուցում վճարելու նպատակով.

2) Օրենքով նախատեսված թույլատրելի սահմաններում հիմնադրամի ծախսերը կատարելու նպատակով.

3) Օրենքի համաձայն հիմնադրամի կողմից թողարկված արժեթղթերով, ներգրավված վարկերով և փոխառություններով ստանձնված պարտավորությունների կատարման նպատակով.

4) Հիմնադրամի գործունեության նպատակին համապատասխան՝ Հիմնադրամի բնականոն գործունեությունն ապահովելու համար:

22. Հիմնադրամին հասցեագրված դրամական միջոցների սկզբնական հաշվառումը կատարվում է Կենտրոնական բանկում բացված հատուկ հաշվում: Կենտրոնական բանկում բացված հատուկ հաշում հաշվառվելուց հետո, դրամական միջոցները օգտագործվում են Օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված ուղղություններով:

23. Հիմնադրամի միջոցները կարող են կառավարվել Հիմնադրամի կողմից ինքնուրույն՝ հատուկ այդ նպատակով ստեղծված գործադիր հանձնաժողովի միջոցով, կամ կառավարման հանձնվել Հոգաբարձուների խորհրդի կողմից սահմանած կարգին եւ չափանիշներին համապատասխան ընտրված ակտիվների՝ արտաքին, անկախ, մասնագիտացված կառավարչին:

24. Հիմնադրամի միջոցները կարող են ներդրվել բացառապես հետևյալ ֆինանսական ակտիվներում՝

- 1) Հայաստանի Հանրապետության պետական արժեթղթերում, Կենտրոնական բանկի արժեթղթերում.
- 2) Կենտրոնական բանկում և(կամ) բարձր վարկանիշ ունեցող բանկերում՝ որպես բանկային ավանդ եւ (կամ) բանկային հաշիվ.
- 3) բարձր վարկանիշ ունեցող երկրների կառավարությունների եւ (կամ) կենտրոնական բանկերի արժեթղթերում.
- 4) Հոգաբարձուների խորհրդի որոշմամբ հաստատված՝ հիմնադրամի ներդրումային պայուսակի կառուցվածքին համապատասխանող այլ ակտիվներում:

## **5. Հիմնադրամի կառավարման մարմինները**

25. Հիմնադրամի կառավարման մարմիններն են՝

- 1) Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը.
- 2) Հիմնադրամի տնօրենը.
- 3) Հիմնադրամի գործադիր հանձնաժողովը՝ այդ մարմինը ձևավորելու վերաբերյալ Հոգաբարձուների խորհրդի կողմից որոշում ընդունելու դեպքում:

## **6. Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը**

26. Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը (սույն կանոնադրության մեջ՝ Հոգաբարձուների խորհուրդ կամ՝ Խորհուրդ)՝ հիմնադրամի կառավարման բարձրագույն մարմինն է:

27. Հոգաբարձուների խորհուրդը կազմված է իննը անդամից: Հոգաբարձուների խորհրդի անդամներին նշանակում է՝

- 1) երեքին՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը.

2) երեքին՝ Կենտրոնական բանկի խորհուրդը.

3) երեքին՝ զինձառայողների շահերի պաշտպանությամբ զբաղվող հասարակական կազմակերպությունները.

28. Հոգաբարձուների խորհրդի անդամները նշանակվում (ընտրվում) են հինգ տարի ժամկետով:

29. Եթե Կառավարության և Կենտրոնական բանկի կողմից Խորհրդի՝ իրենց անդամներին նշանակելու օրվանից մեկ ամսվա ընթացքում զինձառայողների շահերի պաշտպանությամբ զբաղվող հասարակական կազմակերպությունները չեն նշանակում խորհրդի իրենց անդամներին կամ դրանցից մեկին՝ ապա չնշանակված անդամներին (անդամին)՝ մեկամսյա ժամկետը լրանալու օրվանից 10 օրվա ընթացքում նշանակում են խորհրդի՝ Կառավարության և կենտրոնական բանկի խորհրդի կողմից նշանակված անդամները:

30. Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կազմում թափուր տեղ առաջանալու դեպքում, հիմնադրամի տնօրենն այդ մասին ծանուցում է Խորհրդի համապատասխան անդամին նշանակելու իրավասություն ունեցող մարմնին կամ կազմակերպությանը (կազմակերպություններին): Խորհրդի անդամների կազմում առաջացած թափուր տեղում՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարությունը կամ կենտրոնական բանկն իրենց անդամին նշանակում են հիմնադրամի տնօրենի ծանուցումը ստանալու օրվան հաջորդող տաս օրվա ընթացքում.

2) զինձառայողների շահերի պաշտպանությամբ զբաղվող հասարակական կազմակերպություններն իրենց անդամին նշանակում են հիմնադրամի տնօրենի ծանուցումը ստանալու օրվան հաջորդող 30 օրվա ընթացքում: Եթե սույն կետում նշված ժամկետում զինձառայողների շահերի պաշտպանությամբ զբաղվող հասարակական կազմակերպությունները չեն նշանակում խորհրդի իրենց անդամին, ապա չնշանակված անդամին՝ սույն մասում նշված մեկամսյա ժամկետը լրանալու օրվանից 10 օրվա ընթացքում նշանակում են խորհրդի մնացած անդամները:

31. Խորհրդի անդամները պետք է ունենան կառավարման եւ ֆինանսների բնագավառներում գիտելիքներ եւ առնվազն հինգ տարվա փորձ: Նրանք պետք է լինեն հասարակության շրջանում հարգանք վայելող եւ անբասիր համբավ ունեցող անձինք:

32. Խորհուրդն ունի նախագահ, որին իրենց կազմից ընտրում են խորհրդի անդամները՝ հինգ տարի ժամկետով:

33. Հոգաբարձուների խորհուրդն աշխատում է հասարակական հիմունքներով:

34. Խորհրդի բացառիկ իրավասությանն է պատկանում՝

1) հիմնադրամի բյուջեի հաստատումը, ինչպես նաեւ՝ հիմնադրամի ծախսերի տարեկան թույլատրելի սահմանաչափի սահմանումը.

2) հիմնադրամի գործադիր հանձնաժողովի անդամների նշանակումը, հանձնաժողովի ձեւավորման, գործունեության եւ լուծարման կարգերի հաստատումը: Հիմնադրամի այլ մարմինների ձեւավորումը եւ դրանց լիազորությունների սահմանումը:

3) հիմնադրամի տնօրենի նշանակումը.

- 4) հիմնադրամի աուդիտն իրականացնող կազմակերպության ընտրությունը.
- 5) հիմնադրամի կողմից եռամսյակային հաշվետվությունների հրապարակման կարգը, ձևը եւ հաշվետվությունների հաստատումը:
- 6) Օրենքով նշված այն ֆինանսական ակտիվների ցանկի սահմանումը, որոնցում կարող են ներդրվել հիմնադրամի միջոցները (ներդրումային պայուսակի կառուցվածքի սահմանումը).
- 7) բարձր վարկանիշ ունեցող օտարերկրյա կառավարությունների, կենտրոնական բանկերի եւ (կամ) բանկերի վարկանիշի նվազագույն շեմի սահմանումը.
- 8) Հիմնադրամի ակտիվների կառավարման նպատակով արտաքին, անկախ, մասնագիտացված կառավարչին ներկայացվող պահանջների սահմանումը, կառավարչի ընտրության կարգի սահմանումը և կառավարչի ընտրությունը.
- 9) շահառուներին հատուցման գումարներ վճարելու կարգի սահմանումը.
- 10) Այն որոշումների և կարգերի ընդունումը, որոնց ընդունումը Օրենքով, ինչպես նաև «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքով վերապահված է Խորհրդի իրավասությանը:
- 11) հիմնադրամի գործունեության նկատմամբ կորպորատիվ վերահսկողություն իրականացնելը.
35. Խորհրդի բացառիկ իրավասությունը հանդիսացող հարցերը չեն կարող փոխանցվել այլ մարմնի:
36. Խորհուրդն իրավունք ունի ծանոթանալու Հիմնադրամի բոլոր փաստաթղթերին:
37. Խորհուրդն իր գործունեությունն իրականացնում է նիստերի միջոցով: Խորհրդի նիստն իրավագոր է, եթե դրանց մասնակցում են Խորհրդի անդամների կեսից ավելին, ընդ որում նրանք կարող են Խորհրդի նիստերին մասնակցել նաև հեռակա կարգով:
38. Նիստերը գումարվում են պարբերաբար, բայց ոչ պակաս, քան երեք ամիսը մեկ անգամ: Խորհրդի նիստերը կարող են հրավիրվել նաև Խորհրդի անդամների 1/3-ի պահանջով՝ Խորհրդի նախագահի կողմից՝ համապատասխան պահանջը ներկայացնելուց 30 օրվա ընթացքում: Խորհրդի նիստերը կարող են անցկացվել էլեկտրոնային փոստի կամ կապի այլ միջոցների կիրառմամբ, ինչպես նաև հարցման կարգով:
39. Խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին մասնակցող անդամների ձայների մեծամասնությամբ, իսկ Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահի ընտրության և պաշտոնից ազատման, Հիմնադրամի տնօրենի ընտրության և պաշտոնից ազատման, Հիմնադրամի անվանման փոփոխության, և կանոնադրության փոփոխության կամ նոր խմբագրությամբ կանոնադրության հաստատման վերաբերյալ որոշումներն ընդունվում են Խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների որակյալ (2/3) մեծամասնությամբ:
40. Եթե Խորհրդի նիստի ընթացքում քննարկվում է Հիմնադրամի Խորհրդի անդամներից մեկի կամ նրա հետ փոխկապակցված անձի գույքին կամ շահերին (մասնագիտական, ֆինանսական և այլ) վերաբերող հարց, ապա Խորհրդի այդ անդամը քվեարկությանը չի մասնակցում:
41. Խորհրդի նիստերն արձանագրվում են: Արձանագրությունը ստորագրում են նիստին մասնակցած Հիմնադրամի խորհրդի բոլոր անդամները:
42. Խորհրդի նախագահը՝



- 1) կազմակերպում է Խորհրդի աշխատանքները,
- 2) գումարում է Խորհրդի նիստերը և նախագահում է դրանք,
- 3) կազմակերպում է Խորհրդի նիստերի արձանագրության վարումը:

## **7. Հիմնադրամի տնօրենը**

43. Հիմնադրամի տնօրենը հիմնադրամի ընթացիկ գործունեության ղեկավարում իրականացնող բարձրագույն պաշտոնատար անձն է:

44. Հիմնադրամի տնօրենին նշանակում է խորհուրդը:

45. Հիմնադրամի տնօրենը՝

- 1) ապահովում է հիմնադրամի բնականոն գործունեությունը.
  - 2) առանց լիազորագրի հանդես է գալիս հիմնադրամի անունից.
  - 3) տալիս է լիազորագրեր.
  - 4) հիմնադրամի անունից կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային.
  - 5) աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում հիմնադրամի աշխատակիցներին, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ.
  - 6) խորհրդի հաստատմանն է ներկայացնում հիմնադրամի գործառնական և վարչական ծախսերի սահմանաչափը.
  - 7) իրականացնում է Օրենքով, «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքով և (կամ) սույն կանոնադրությամբ Խորհրդի իրավասությանը չվերապահված այլ լիազորություններ:
46. Տնօրենն այլ կազմակերպություններում կարող է վճարովի պաշտոններ զբաղեցնել միայն Խորհրդի համաձայնությամբ:

47. Հիմնադրամի տնօրենը պատասխանատվություն է կրում Հիմնադրամի հաշվապահական հաշվառման կազմակերպման, դրա վիճակի և հավաստիության, տարեկան հաշվետվության, ֆինանսական և վիճակագրական հաշվետվություններն օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված մարմիններին ժամանակին ներկայացնելու, ինչպես նաև Հիմնադրամի մարմիններին և այլ անձանց տրամադրվող տեղեկությունների հավաստիության համար:

## **6. Հիմնադրամի գործադիր հանձնաժողովը, աուդիտ և հաշվետվողականություն**

48. Այն դեպքում, երբ հիմնադրամն ինքնուրույն է կառավարում իր միջոցները, ապա հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի որոշմամբ պետք է ստեղծվի երեքից յոթ անդամ ունեցող գործադիր հանձնաժողով, որի միակ գործառույթը՝ հիմնադրամի ակտիվների պրոֆեսիոնալ կառավարումն է: Գործադիր հանձնաժողովը պետք է կազմված լինի ակտիվների կառավարման բնագավառում մասնագիտական փորձ ունեցող անձանցից: Հիմնադրամի տնօրենն ի պաշտոնե հանդիսանում է

գործադիր հանձնաժողովի անդամ: Գործադիր հանձնաժողովի ձեռավորման, գործունեության եւ լուծարման կարգերը սահմանվում են խորհրդի որոշմամբ:

49. Խորհրդի որոշմամբ Հիմնադրամում կարող է ստեղծվել ներքին աուդիտ իրականացնող մարմին, որը խորհրդին հիմնադրամի ներքին հսկողության, ռիսկերի կառավարման և կորպորատիվ կառավարման արդյունավետության վերաբերյալ անկախ և անաչառ գնահատական տվող մարմին է: Ներքին աուդիտ իրականացնող մարմնի անդամներին նշանակում է խորհուրդը: Ներքին աուդիտ իրականացնող մարմնին անկախ է գործադիր մարմնից: Ներքին աուդիտ իրականացնող մարմնի ձևավորման կարգն ու իրավասությունները սահմանվում է Խորհրդի կողմից:

50. Հիմնադրամի գործունեությունը յուրաքանչյուր տարի ստուգվում է արտաքին անկախ միջազգային ճանաչում ունեցող աուդիտորական կազմակերպության կողմից: Աուդիտը, ինչպես նաև՝ հիմնադրամում հաշվապահական հաշվառումն իրականացվում է միջազգային ստանդարտներին համապատասխան:

51. Հիմնադրամը՝ իր գործունեության վերաբերյալ հրապարակում է եռամսյակային հաշվետվություններ՝ խորհրդի կողմից սահմանված կարգով, ձևով և բովանդակությամբ:

52. Հիմնադրամի տնօրենը պատասխանատու է եռամսյակային հաշվետվությունների պատշաճ կարգով հրապարակման համար:

## **7. Սույն կանոնադրության փոփոխությունները, Հիմնադրամի վերակազմակերպումը, լուծարումը և սնանկությունը**

**53. Սույն կանոնադրությունը կարող է փոփոխվել Խորհրդի որոշմամբ:**

54. Հիմնադրամը կարող է լուծարվել, վերակազմակերպվել կամ սնանկ ճանաչվել միայն Հիմնադրամի լուծարման, վերակազմակերպման կամ սնանկ ճանաչելու մասին օրենք ընդունելու դեպքում:

